



Բարի գալուստ CalFresh! Հաջորդը ի՞նչ է

Պահպանել ձեր Calfresh նպաստները այնքան հեշտ է, որքան 1, 2, 3

1 ՄԻՇՏ ՀԱՅՏՆԵՔ ԵԿԱՍՈՒՏԸ, ՈՐԸ ԱՆՑՆՈՒՄ Է ՁԵՐ ԵԿԱՍՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՇԵՄԸ (IRT) Ի՞նչ է IRT-ն:

Ձեր IRT-ն ընդհանուր ամսական համախառն եկամուտն է, որը դուք պետք է հայտնեք: Ընդհանուր ամսական համախառն եկամուտն ասելով նկատի ունենք ցանկացած գումար, որ ձեր ընտանիքը ստանում է հարկերից առաջ:

Ի՞նչ պետք է անեմ, եթե իմ ընտանիքի համախառն եկամուտը անցնում է իմ IRT-ն:

Եթե ցանկացած պահին ձեր ընտանիքի համախառն եկամուտը անցնի ձեր IRT-ն, դուք պետք է հայտնեք ձեր նոր համախառն եկամուտը ձեր աշխատողին ստանալուց հետո 10 օրացուցային օրվա ընթացքում:

Ինչպե՞ս պետք է հայտնեմ, որ իմ նոր եկամուտը անցնում է իմ IRT-ն:

Դուք կարող եք հայտնել ձեր նոր եկամուտը զանգահարելով հաճախորդների սպասարկման կենտրոն՝ (866) 613-3777, ԱՄՆ փոստով, կամ անձամբ ձեր տեղական DPSS գրասենյակում:

Ձեր ընտանիքում ապրող անձանց թիվը	IRT- Ընտանիքի ամսական համախառն եկամտի սահմանը
1	\$1,383
2	\$1,868
3	\$2,353
4	\$2,839
5	\$3,324
6	\$3,809
7	\$4,295
8	\$4,780
Յուրաքանչյուր լրացուցիչ անձը	+486

Օրինակ: Ձեր 4 հոգուց բաղկացած ընտանիքի համար, ձեր IRT-ն \$2,839 է:

Դուք այս ամսվա ընթացքում վաստակել եք \$3,165, որը ձեր IRT-ից \$326-ով բարձր է: Գումարը ստանալուց հետո, 10 օրացուցային օրվա ընթացքում, դուք պետք է այն հայտնեք:



Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարեք հաճախորդների սպասարկման կենտրոն՝ (866) 613-3777 կամ լրացուցիչ տեղեկությունների համար, այցելեք DPSS-ի կայքէջը՝ dpss.lacounty.gov.





2 ԼՐԱՑՐԵՔ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՔ ԶԵՐ ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ (SAR 7) ԺԱՄԱՆԱԿԻՆ

Ի՞նչ է SAR 7:

SAR 7-ը CalFresh-ի հաշվետվություն է, որտեղ դուք պետք է տրամադրեք ձեր ընտանիքի տվյալների ընթացիկ կարգավիճակը: Ընտանիքի տվյալները ներառում են՝ եկամուտ, տասն ապրող անհատների քանակը, ծախսերը, հասցեն և այլն:

Ի՞նչ տեղեկություններ կարող եմ թարմացնել իմ SAR 7-ի մեջ:

Դուք պետք է պատասխանեք SAR 7-ի բոլոր հարցերին: Եթե դուք հայտնում եք որևէ փոփոխություն, ապա պետք է ներկայացնեք ապացույցներ, ինչպիսիք են՝ չեկի կտրոններ, ընտանիքի նոր անդամների համար սոցիալական ապահովության համար և այլն:

Ե՞րբ եմ լրացնելու իմ SAR 7-ը:

Ընտանիքների մեծամասնությունը պետք է լրացնի և ներկայացնի SAR 7-ը տարին մեկ անգամ և ժամկետը մինչև ներկայացված ամսվա 5-րդ օրացուցային օրն է: Ձեր ներկայացման ամսին հետևում է ձեր հաշվետվության /տվյալների ամիսը, որը նշված է ձեր SAR 7 հաշվետվության մեջ:

Ներկայացման ամիս - Ամիս, որի ընթացքում ձեր SAR 7-ը պետք է ներկայացնեք DPSS-ին և այս ամսաթիվը արդեն գրված կլինի ձեր SAR 7-ում:

Հաշվետվության/Տվյալների ամիս - Սա ձեր SAR 7-ը ներկայացնելու և ձեր ընտանիքի տվյալները հաղորդելու ամսին նախորդող ամիսն է:

Ինչպե՞ս պետք է ներկայացնեմ իմ լրացված SAR 7-ը:

Ներկայացրեք ձեր SAR 7-ը և տեղեկությունները առցանց YBN կայքէջի միջոցով՝ dpss.lacounty.gov, ԱՄՆ փոստով, կամ անձամբ ձեր տեղական DPSS գրասենյակում:

Օրինակ. Նոյեմբերին ձեր երեխան ծնվել է և ձեր հաշվետվության/տվյալների ամիսը նոյեմբերն է:

Դուք պետք է ներկայացնեք ձեր լրացված SAR 7-ը ապացույցների հետ մեկտեղ մինչև դեկտեմբերի 5-ը (ձեր ներկայացման ամսվա 5-րդ օրացուցային օրը):

3 ԼՐԱՑՐԵՔ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՄԱՆ ՓԱԹԵԹԸ ԵՎ ԿԱՏԱՐԵՔ ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ

Ի՞նչ է վերահաստատումը:

Վերահաստատումը CalFresh նպաստների և ընտանիքի տեղեկությունների վերազնահատումն է: Սա բաղկացած է Վերահաստատման դիմումագրից և նշանակված հեռախոսային հարցազրույցից:

Ե՞րբ պետք է լրացնեմ վերահաստատման դիմումագիրը և կատարեմ հեռախոսային հարցազրույցը:

Շատ ընտանիքներ պետք է լրացնեն վերահաստատում յուրաքանչյուր 12 ամսվա ընթացքում: DPSS-ը ձեզ կուղարկի վերահաստատման դիմումագիր և հեռախոսային հարցազրույց կնշանակի ձեզ հետ: Դուք պետք է ձեր վերահաստատման դիմումագիրը լրացնեք և ուղարկեք ձեր աշխատողին մինչև 25-ը այն ամսվա, որի ընթացքում փաթեթը ստացել եք: Սա պետք է կատարվի մինչև ձեր նշանակված հեռախոսային հարցազրույցին մասնակցելը:

Ինչպե՞ս ներկայացնեմ իմ վերահաստատման դիմումագիրը:

Դուք կարող եք ներկայացնել ձեր վերահաստատման դիմումագիրը առցանց YBN-ի կայքէջում՝ dpss.lacounty.gov, ԱՄՆ փոստով, կամ անձամբ ձեր տեղական DPSS-ի գրասենյակում: Unidos, o en persona en su oficina local del DPSS.

Օրինակ. Ձեր CalFresh նպաստները հաստատվել են հունվարին: Դուք կստանաք ձեր վերահաստատման դիմումագիրը նոյեմբերի 12-ին և ձեր վերահաստատման հեռախոսի հարցազրույցը կնշանակվի դեկտեմբերի 8-ին:

Դուք պետք է ներկայացնեք ձեր վերահաստատման դիմումագիրը մինչև նոյեմբերի 25-ը նախքան դեկտեմբերի 8-ին նշանակված հարցազրույցի անցկացնելը

